# ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱԾԽԱՋՐԱԾՆԱՅԻՆ ՇԱՐԺԻՉԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔՆԵՐԻՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԷՆԵՐԳԱԿԻՐՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ  ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

……………………. 2018 թվականի  № …… - Ն

Հայաստանում ածխաջրածնային շարժիչային վառելիքներին այլընտրանք հանդիսացող էներգակիրների կիրառման համար ենթակառուցվածքների հեռանկարային զարգացման միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին

Հիմք ընդունելով «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները և հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի № 646–Ա որոշման հավելվածի «3.4 Էներգետիկ ենթակառուցվածքներ և բնական պաշարներ» բաժնի «Էներգետիկա» մասի 2-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել «Հայաստանում ածխաջրածնային շարժիչային վառելիքներին այլընտրանք հանդիսացող էներգակիրների կիրառման համար ենթակառուցվածքների հեռանկարային զարգացման միջոցառումների ցանկը» համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ սույն որոշման առաջին կետով հաստատված ցանկում ընդգրկված միջոցառումների կատարմամբ թիրախավորվում է երկարաժամկետ հեռանկարում՝ մինչև 2040 թվականը Հայաստանում ածխաջրածնային շարժիչային վառելիքների նվազագույն կիրառման համար, իսկ դրանց այլընտրանք հանդիսացող էներգակիրների (կենսաէթանոլ, կենսադիզել, կենսագազ, ոչ ածխաջրածնային հիմքով ջրածին և էլեկտրական էներգիա) առավելագույն մրցունակ կիրառման համար պայմանների ստեղծումը: Ընդ որում, կենսաէթանոլ, կենսադիզել

և կենսագազ համարվում են այն կենսավառելիքները, որոնք ստացվել են կենսազանգվածի վերամշակման արդյունքում: Իսկ կենսաէթանոլի և կենսադիզելի հումքը (էթիլային սպիրտը և բուսական յուղը) մինչև շուկայահանումը պետք է նաև բնափոխվեն՝ մարդու առողջության համար վնասակարության այն աստիճանի, որի դեպքում դրանց կիրառումը սննդի մեջ այլևս չի թույլատրվում: Այլընտրանքային էներգակիրների որակին ներկայացվող այլ չափորոշիչներ ամրագրվում են համապատասխան ստանդարտներում, իսկ շուկայահանման պահանջները հաստատվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով:

3. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարին՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի հետ համատեղ սահմանված կարգով ներկայացնել առաջարկություններ՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող երեք տարիներին ստանդարտացման տարեկան ծրագրերում այլընտրանքային էներգակիրների շուկայահանման և դրանց ենթակառուցվածքների համար անհրաժեշտ ստանդարտների մշակման ներառումը ապահովելու նպատակով:
4. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարին՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի և Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի հետ համատեղ՝ մաքսային միասնական դրույքաչափերում փոփոխություններ կատարելու նպատակով, սահմանված կարգով մինչև 2019 թվականի 2-րդ եռամսյակ Եվրասիական տնտեսական միության լիազոր մարմնին առաջարկություն ներկայացնել՝ կենսավառելիքների, ինչպես նաև էլեկտրական սնուցմամբ տրանսպորտային միջոցների ներկրման համար մաքսային արտոնություններ սահմանելու վերաբերյալ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: